FB1520E#452-24/CB
10 մայիսի 2024

ՀՀ Կենտրոնական բանկի

նախագահ պարոն Մարտին Գալստյանին

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Հաշվի առնելով ՀՀ ԿԲ Խորհրդի 2008թ. դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 4/04-ի 43-րդ կետը՝ Ձեզ ենք ներկայացնում «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի 2023թ.-ի տարեկան գործունեության հաշվետվությունը:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն-
Տնօրինության նախագահ՝ Գարեգին Դարբինյան

Կապարող՝ Արիաննա Մարալյան
Հեռ. 010 51 00 00 (1515)

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2023թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2023թ. տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնես արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն:

Բանկի Տնօրինության անդամները՝

Գարեգին Դարբինյան	Գործադիր տնօրեն- Տնօրինության նախագահ		10.05.24
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արթուր Հարությունյան	Թվային բանկինգի տնօրեն, Տնօրինության անդամ		10.05.24
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սերգեյ Գասպարյան	Բիզնեսի կառավարման տնօրեն, Տնօրինության		10.05.24
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Թաթուլ Թամրազյան	Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ		10.05.24
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Ավագյան	Ռիսկերի կառավարման և համապատասխանության տնօրեն, Տնօրինության անդամ		10.05.24
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ «ՖԱՍԹ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2023թ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն շարունակում է գրանցել դրական աճ՝ մեծ չափով ավելացնելով ակտիվները, նոր պրոդուկտներ և գործիքակազմ:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են 117 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճելով մոտ 71 %-ով:

Բանկի ակտիվներում տեսակարար կշիռ են կազմում հաճախորդներին տրված վարկերը՝ մոտ 76 %: Վարկային պորտֆելը հաշվետու ժամանակահատվածում կազմում է 89 մլրդ ՀՀ դրամ:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները՝ 11 մլրդ ՀՀ դրամով կազմում են ակտիվների 9.4 %-ը:

Հաշվետու տարում ակտիվների աճին զուգահեռ աճել են նաև Բանկի պարտավորությունները եռակի ՝ կազմելով 63 մլրդ ՀՀ դրամ: Նախորդ տարվա նկատմամբ նաև աճել են թողարկված պարտատոմսերով ձեռք բերված միջոցները կազմելով 6 մլրդ :

Բանկի հաճախորդների ընթացիկ հաշիվներն ու ավանդները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 34 մլրդ՝ ընդհանուր պարտավորությունների մոտ 54.5 %-ը, նախորդ ժամանակաշրջանի 3 %-ի նկատմամբ:

31.12.2023 թ.-ի դրությամբ Ընկերության թողարկած պարտքային արժեթղթերի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը՝ 8.6 մլն ԱՄՆ դոլար և 2.4 մլրդ ՀՀ դրամ:

Զուտ տոկոսային եկամուտը վարկային կորուստների գծով ծախսերի նվազեցումից հետո կազմում է 12 մլրդ ՀՀ դրամ :

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Բանկի տոկոսային եկամուտները 2023թ.-ին աճել են մինչև 14.3 մլրդ ՀՀ դրամ, որը կազմում է շուկայի մոտ 2 %-ը: Զուտ տոկոսային եկամուտը դիտարկվող ժամանակահատվածի համար կազմել է 12 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ աճելով մոտավորապես 2.8 %-ով: Տոկոսային ծախսերը կազմել են 2.5 մլրդ, Բանկի գործառնական եկամուտները 2022թ.-ի համեմատ աճել են 2 %-ով:

Արդյունքում 2023թ.-ին Բանկն ունեցել է շուրջ 4.8 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Իսկ ակտիվների և կապիտալի շահութաբերությունը 2023թ.-ի վերջի դրությամբ կազմել է համապատասխանաբար ՝ 5.3 % և 9.5 %:

ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Ֆինանսական ոլորտում մրցակցային դիրք ապահովելու և արդեն որպես Բանկ լայնածավալ գործունեություն իրականացնելու նպատակով շարունակում է տրանսֆորմացիոն միջոցառումները՝ ֆինանսական, մարդկային ռեսուրսների ինտեգրման, ինչպես նաև ռիսկերի կառավարման ուղղությամբ: Կադրերի հավաքագրման նշանակությունն էական է. դա են փաստում նախորդ տարվա նկատմամբ ունեցած աշխատակիցների թվաքանակի աճը: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ընկերության աշխատակիցների քանակը աճ է գրանցել՝ 31.12.2023թ.-ի դրությամբ հասնելով 953-ի, որը 28 %-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Բանկն աջակցում է իր աշխատակիցներին ոլորտում մասնագիտանալու և հմտություններ ձեռք բերելու հարցում: Բանկի յուրաքանչյուր ստորաբաժանում ունի անձնակազմի ուսուցման գծով պատասխանատու, ով կազմակերպում է վերապատրաստումներ տվյալ ստորաբաժանման, ինչպես նաև մասնաճյուղերի

աշխատակիցների համար: Կազմակերպությունն օգտվում է նաև ինստիտուցիոնալ վերապատրաստում իրականացնող ընկերությունների ծառայություններից:

Բանկում գործում է Խորհրդի կողմից հաստատված վարձատրության հաշվարկման և վճարման կարգը, որը՝ ըստ ստորաբաժանման, յուրաքանչյուր հաստիքի համար նախատեսում է լրավճար, պարգևավճար և հաստիքավճար: Միևնույն ժամանակ, Բանկում նախատեսվում է տարին մեկ անգամ աշխատավարձի վերանայում:

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն բանկային գործունեության լիցենզիա ստանալուց հետո շարունակում է ամրապնդել իր տեղը բանկային համակարգում: 2023 թ. զուտ շահույթի մեծությամբ բանկերի շարքում Ընկերությունն զբաղեցրել է 11-րդ հորիզոնականը ՝ 4.8 մլրդ դրամով՝ 2022 թվականի նկատմամբ նվազելով 1 մլրդ ՀՀ դրամով՝ նաև պայմանավորված մասնաճյուղերի շարունակական վերանորոգմամբ՝ ռեբրենդինգով: Շահույթի էական աճով աչքի են ընկնում Արդշինբանկը (61 մլրդ տեսակարար կշիռը համակարգում՝ 27.3 %), Ամերիաբանկը (46 մլրդ, 21 %), Ակբա Բանկը (28.3 մլրդ, 12.7 %), ինչպես նաև Ինեկոբանկը (26.3 մլրդ 11.8 %):

Հաշվետու ժամանակահատվածում Բանկը շարունակել է դրական աճ գրանցել. Բանկի ակտիվները աճել են 1.5 անգամ ՝ հասնելով 117 մլրդ ՀՀ դրամի, տեսակարար կշիռը բանկային համակարգում հասցնելով 1.3 %-ի՝ նախորդ 0.8 % -ի համեմատ:

2023 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի ցուցանիշով Բանկը բանկերի շարքում պահպանել է նախորդ տարվա 15-րդ հորիզոնականը՝ նույն ժամանակահատվածի նկատմամբ պորտֆելը աճեցնելով 57 %-ով՝ մինչև 89 մլրդ ՀՀ դրամ, իսկ բանկային համակարգում տեսակարար կշիռը բարձրացրել է 0.4 %-ով՝ կազմելով 1.8 %, բանկերի վարկային պորտֆելի միջին մեծությունը կազմել է 275 մլրդ ՀՀ դրամ, ինչը մոտ 3 անգամ գերազանցում է Բանկի վարկային պորտֆելի

մեծությանը: Բանկի վարկային պորտֆելն աճել է 32.3 մլրդ ՀՀ դրամով: Շուկայում առաջատարներն են Ամերիաբանկը (985 մլրդ ՀՀ դրամ կամ շուկայի 20 %), Արդշինբանկը (672 մլրդ ՀՀ դրամ՝ 14 %), ԱՄԻՕ Բանկը (500 մլրդ ՀՀ դրամ կամ 10 %) և Ակբա Բանկը (460 մլրդ ՀՀ դրամ կամ 9 %), որոնք միասին զբաղեցնում են շուկայի կեսից ավելին (53 %): Վարկային պորտֆելի անկում է գրանցվել ՎՏԲ Հայաստան Բանկում. նախորդ տարվա համեմատ վարկային պորտֆելը կրճատվել է 2 մլրդ ՀՀ դրամով, Արցախբանկում՝ 10.6 մլրդ ՀՀ դրամով, Բիբլոսբանկում՝ 1.5 մլրդ ՀՀ դրամով և ԱՄԻՕ Բանկում՝ 1.3 մլրդ ՀՀ դրամով, սակայն, ինչպես տեսանք վերոգրյալում, ԱՄԻՕ Բանկը, չնայած պորտֆելի մի փոքր անկման, շարունակում է մնալ առաջատարների շարքում:

Բանկը հաշվետու ժամանակաշրջանի երրորդ եռամսյակի վերջից սկսած սկսել է դրամային և դոլարային պարտատոմսերի թողարկումներ՝ պարտատոմսերի պորտֆելը հասցնելով 6 մլրդ ՀՀ դրամի՝ նախորդ 1.5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն՝ արժեթղթերի շուկայում կորպորատիվ պարտատոմսերի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելով նաև Ֆասթ Բանկի պարտատոմսերի նկատմամբ՝ արդեն որպես Բանկ: Հաշվի առնելով մի քանի ամսում պարտատոմսերի պորտֆելի նման աճը՝ Բանկը պլանավորում է իրականացնել շարունակական թողարկումներ նաև գործունեության հետագա փուլերում:

Բանկը 2023թ-ին ակտիվների շահութաբերության ցուցանիշով երկրորդ հորիզոնականում է 5.3 %-ով է, իսկ կապիտալի շահութաբերության ցուցանիշով՝ 12-րդը 9.5 %-ով:

Կապիտալի շահութաբերության ցուցանիշով առաջին եռյակում գտնվող բանկերն են Արդշինբանկը, Ինեկոբանկը և Այ Դի Բանկը՝ համապատասխանաբար 36.5 %, 31.2 % և 25.8 % ցուցանիշներով:

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն արդեն մեկ տարի գործելով որպես Բանկ՝ իր գործունեության շրջանակներում պահպանել է մրցակցային առավելությունները.

- ✓ Տոկոսային և ոչ տոկոսային բարձր եկամուտների գեներացման կարողություններ (արտահայտված տարբեր ցուցանիշներով, ինչպիսին է գործառնական եկամուտներ/ակտիվներ հարաբերակցությունը): Հաշվետու ժամանակահատվածի համար ակտիվների օգտագործման գործակիցը (AU) կազմել է 10.7 % :
- ✓ Կապիտալիզացիայի բավականին բարձր մակարդակ. 31.12.23թ.-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 38.9 %:

Բանկային համակարգի վերլուծությունը և Բանկի դիրքի գնահատումը ցույց են տալիս, որ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն ունի հսկայական ներուժ նախատեսված աշխատանքներն արդյունավետ իրականացնելու տեսանկյունից:

ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բանկի ռազմավարությունը և բիզնես մոդելը մշակված է աշխարհում հայտնի թվային բանկի մոդելի լավագույն փորձի հիման վրա՝ միաժամանակ կիրառելով յուրօրինակ մոտեցումներ: Վերջնարդյունքում Բանկի բիզնես մոդելի կենտրոնում լինելու է ՀԱՃԱԽՈՐԴԸ, որը մեր միջոցով կստանա անհատականացված և արդյունավետ լուծումներով բանկային ծառայություններ:

Ներկայումս Բանկը ներդնում է բանկային գործունեության իրականացման համար անհրաժեշտ գործընթացներ, սեփական ուժերով ստեղծում Բանկային ծրագիր, ընդլայնում ու զարգացնում է նորարարական պրոդուկտների ներկայացման հնարավորությունները և գործիքակազմը, զարգացնում պրոդուկտների և ծառայությունների մատուցման թվային ուղիները (Fast Bank Mobile Internet Banking, Fcachurd.am, Info Kiosk, Social Media, E-mail, SMS):

Պլանավորվում է ակտիվների աճ, որը կզուգակցվի վարկային պորտֆելի շարունական աճով, որի նպատակով էլ իրականացվում են ակտիվ աշխատանքներ:

Ակտիվների աճ նաև պլանավորվում է ապահովել ներդրումային արժեթղթերով: Դառնալով Բանկ՝ ընկերությունը փորձում է էլ ավելի կատարելագործել մատուցվող ծառայությունները, ներդնել նորերը, ինչպիսիք են՝ օրինակ ներդրումային գործունեության իրականացումը, բրոքերային և հաճախորդների ակտիվների կառավարման ծառայությունների մատուցումը: Ներդրումային ծառայությունների մատուցման զարգացումը խթանելու նպատակով Բանկը ջանք չի խնայում, որպեսզի իր հաճախորդներին ապահովի արժեթղթերի շուկայում արագ և ճշգրիտ գործարքների իրականացման, արժեթղթերի մասին ինֆորմացիայի տրամադրման հնարավորություններով, միևնույն ժամանակ արժեթղթերի շուկայում ակտիվություն դրսևորելու նպատակով Բանկը իրականացնում է դրամային և դոլարային պարտատոմսերի թողարկումներ հաճախորդների համար ապահովելով բարձր եկամտաբերություն:

Բանկն աշխատում է շուրջօրյա՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին մատուցելով բանկային գործունեությանը բնորոշ պրոդուկտներ և ծառայություններ, ինչը հաճախորդների համար ավելի հասանելի և հարմարավետ է դարձնում Բանկի ծառայություններից օգտվելը:

Բանկը նախատեսում է ձևավորել հաճախորդի պահանջմունքները լավագույնս բավարարող քարտեր, անդամակցել Apple pay և Google pay համակարգին:

Բացի վերոնշյալից Բանկը նաև նախատեսում է ընդլայնել իր գործունեությունը, և այժմ տարվում են աշխատանքներ նոր մասնաճյուղերի բացման և վերազինման ուղղությամբ: 31.12.2023թ. դրությամբ Բանկն ունեցել է 32 մասնաճյուղ, իսկ նոր մասնաճյուղերի բացումը հաճախորդներին հնարավորություն կտա ավելի հասանելի և հարմարավետ ձևով օգտվել առաջարկվող ծառայություններից:

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բանկի գործունեության բնույթը ցույց է տալիս, որ այն առնչվում է ռիսկերի լայն շրջանակի հետ: Պորտֆելի կառուցվածքից պարզ է դառնում, որ ներկայումս Բանկի գործունեությանը ներհատուկ հիմնական ռիսկերը վարկային, շուկայական, իրացվելիության, գործառնական և համապատասխանության ռիսկերն են:

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Բանկի խնդրահարույց վարկերի (համաձայն ՀՀ ԿԲ դասակարգման չափանիշների հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասերով դասակարգված վարկեր) կշիռը ամբողջ բալանսային պորտֆելի մեջ 2023թ. վերջի դրությամբ կազմել է 13.73 %, որոնց գերակշիռ մասը ապահովված են բարձր իրացվելի թանկարժեք իրերի գրավներով:

Բանկի վարկային քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի բարձրացումը: Շարունակվում են համապատասխան միջոցառումներ իրականացվել վարկերի տրամադրման որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի ստեղծման՝ այդ թվում ներքին սքորինգային համակարգերի ինտեգրման միջոցով:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿ

Բանկի գործունեությանը ներհատուկ հիմնական շուկայական ռիսկերը արտարժութի, տոկոսադրույքի և գնային ռիսկերն են:

Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելը 31.12.2023թ դրությամբ կազմում է 8,2 մլրդ դրամ, որի ձևափոխված դյուրացիան՝ 4.12:

Բանկի արտարժութային դիրքերը 31.12.2023թ-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Արժույթ	Արտարժութային դիրք
USD	0.4%
EUR	1.7%
RUB	3.1%
Այլ	0.2%

2023թ. արձանագրվել է գնաճի աճի տեմպի նվազում, ինչի հետևանքով ՀՀ ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 9.25 %:

Արտարժութային շուկայում ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքը 2023 թվականի ընթացքում պահպանել է գրեթե նույն մակարդակը, գրանցելով մեկ շոկային ժամանակահատված: Կազմակերպությունը տարեվերջին ունեցել է երկար դոլարային դիրք, որը ամբողջությամբ գտնվել է կառավարելի մակարդակում: Եվրո և ՌԴ ռուբլի արտարժույթներով դիրքերը ևս կառավարելի մակարդակում են եղել:

Բանկի վարկային պորտֆելում գերակշիռ մաս են զբաղեցնում ոսկու գրավով տրամադրված վարկերը: Ներդրված է խնդրահարույց վարկերի գրավի բռնագանձման և վաճառքի բավական արդյունավետ գործընթաց, որի շնորհիվ ոսկու գների փոփոխությամբ պայմանավորված գնային ռիսկը հնարավորինս նվազեցվում է:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

2023թ.-ին Բանկն իր գործունեությունը ծավալել է՝ ապահովելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակ: Բանկում ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի համադրումից երևում է, որ պարտավորությունների գերակշիռ մասը միջնաժամկետ են, որոնք տեղաբաշխված են կարճաժամկետ և արագ իրացվելի թանկարժեք իրերի գրավով վարկերի տեսքով:

Բանկը 2023թ. ընթացքում սահմանված ժամկետներում իրականացրել է իր բոլոր վճարումները պարտավորությունների մասով՝ այդ թվում իր կողմից թողարկած կորպորատիվ պարտատոմսերի արժեկտրոնները:

Բանկի իրացվելիության ռիսկը գտնվում է ընդունելի մակարդակում: Ստորև ներկայացվում են իրացվելիության հիմնական նորմատիվների մասով Բանկի ցուցանիշները 31.12.2023թ.-ի դրությամբ.

Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն	20 %
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն	210.4 %
Բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցություն	191 %
Բոլոր արժույթներով արտահայտված հասանելի կայուն միջոցների և բոլոր արժույթներով արտահայտված բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև սահմանային հարաբերակցություն	116 %

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ

Բանկում գործում է գործառնական և համապատասխանության ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգեր, որոնց հիմնական բաղադրիչներից են գործընթացների արդյունավետ մշտադիտարկումը, իրավասությունների և պարտականությունների հստակ ձևակերպումը և բաժանումը, ռիսկերի հայտնաբերման, ուսումնասիրման, գնահատման և զսպման ուղղությամբ տարվող մշտական աշխատանքները:

Բանկը ապահովում է կառուցվածքի, գործարար գործընթացների, ռիսկերի կառավարման համակարգի և հաշվետվողականության նկատմամբ ներքին հսկողության համալիր համակարգ՝ ապահովելով Բանկում ակտիվների պահպանումը, գործունեության անընդհատությունը, ներհատուկ ռիսկերի ժամանակին բացահայտումն ու կառավարումը, ինչպես նաև գործունեության համապատասխանության ապահովումը գործող օրենսդրության և ներքին իրավական ակտերի պահանջներին:

Բանկում առկա են Ներքին աուդիտի, Ռիսկերի կառավարման և Համապատասխանության ստորաբաժանումներ, որոնց գործառույթները ներառում են նաև ներքին հսկողության համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Ներքին դիտարկումների ծառայությունը իրականացնում է փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման դեմ ուղղված գործառույթներ, ինչի շրջանակներում դիտարկվում են ընկերությունում կատարված գործարքները, բացահայտվում են հնարավոր ՓԼԱՖ ռիսկերը, և դրանց վերաբերյալ Բանկի խորհրդին և լիազոր մարմնին ներկայացվում են հաշվետվություններ՝ ՓԼԱՖ դեմ պայքարի օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված կարգով: